

ԴԻՄՈՒՄ

Հունիսի 2-ը որպես «Փաստաբանի օր» սահմանելու մասին

Հիմք ընդունելով 30.09.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 387-Լ որոշման հավելվածով հաստատված «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին կարգը՝ սույն դիմումով առաջարկում ենք **հունիսի 2-ը սահմանել որպես «Փաստաբանի օր»:**

Հիմնավորումներ.

1921 թվականի մարտի 15-ին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայ վրիժառու, Հայոց ցեղասպանության վերապրող Սողոմոն Թեհլերյանը Նեմեսիս գործողության շրջանակներում Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հարդենբերգ փողոցում գնդակահարել է երիտթուրքերի ներքին գործերի նախարար և **Հայոց ցեղասպանության** գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշային:

1921 թվականի **հունիսի 2-ին** Բեռլինում տեղի է ունեցել Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, որն ավարտվել է Թեհլերյանի **արդարացման դատավճռով**:

Նկատի ունենալով, որ «Փաստաբանի օր» սահմանելը ինքնանպատակ չէ, այլ հետապնդում է որոշակի կոնկրետ նպատակներ, այն է՝

- հայոց անկախ պետականության ներկայիս փուլի կերտում՝ Հայաստանի Հանրապետության նաև **իրավական պետություն** լինելու ընդգծման միջոցով և հայոց պատմության անցյալի վերաարժեքավորում՝ մասնավորապես հայոց ցեղասպանությանը նաև իրավական գնահատական տալու, նշված հարցը միջազգային հանրության դիտանկյունից ներկայացնելու միջոցով,
- լայն առումով փաստաբանական ինստիտուտի և մասնավորապես փաստաբանի դերի և հեղինակության բարձրացում և կարևորում հայ հասարակության շրջանակներում՝ նպաստելով նաև իրավական գիտակցության բարձրացմանը,
- միջազգային կապերի ամրապնդում, օտարերկրյա գործընկերների ներկայության ապահովում՝ ընդգծելով օրվա խորհուրդն ու կարևորությունը,
- այլ նպատակներ:

Տվյալ դեպքում **հունիսի 2-ը** առավել քան նպաստում է վերոնշյալ նպատակների ապահովմանը: Մասնավորապես՝ նշված օրը սահմանելով և նշելով որպես «Փաստաբանի օր» մենք՝ փաստաբաններս, նախ՝ կարևորում ենք **արդարացման դատավճիռներն** առհասարակ՝ ընդգծելով նաև մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային մակարդակով, քանի որ տվյալ դեպքում

արդարացման դատավճիռ կայացրել է Բեռլինի դատարանը, ինչպես նաև հանրության ուշադրությունն ենք հրավիրում Սողոմոն Թեհլերյանի **արդարացման դատավճռի** հիմքում ընկած դրդապատճառների ու փաստերի վրա՝ մասնավորապես ընդգծելով հայոց ցեղասպանությունը որպես հանցագործություն դատապարտելու միջազգային-իրավական գնահատականները:

Բացի այդ, հարկ է նկատել, որ ճիշտ է՝ Հայոց ցեղասպանությունը հայոց պատմության ամենացավալի և ամենաողբերգական էջերից մեկն է և յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին մենք հարգանքի տուրք ենք մատուցում եղեռնի ժամանակ անմեղ զոհվածների հիշատակին, սակայն չպետք է մոռանալ, որ մեր պատմությունը լի է նաև մեծագույն հաղթանակներով, որոնցից մեկն էլ հանդիսանում է 1921թ. **հունիսի 2-ի** Սողոմոն Թեհլերյանի արդարացման դատավճիռը, որով միջազգային հանրությունը, մասնավորապես Գերմանիան, գնահատական տալով Սողոմոն Թեհլերյանի Թալեաթ փաշային սպանելու արարքին, վերջինիս արդարացրեց՝ որպես անմեղի: Սա հայ ազգի իրավական առումով **առաջին հաղթանակն է** ցեղասպան Թուրքիայի նկատմամբ:

Այսինքն՝ նույնիսկ ամենացավալի իրադարձությունների միջից, մենք՝ հայերս դուրս ենք եկել հպարտությամբ, ավելին՝ կարելի է և պետք է մեր ցավը հիշենք նաև հաղթանակներով:

Եվ ինչու եղեռնի մասին պետք է հիշել միայն ապրիլի 24-ին, եթե կարելի է տարվա մեջ 2 անգամ այն հիշատակել, բայց 2-րդը հպարտությամբ, իրավական գնահատականներով և ոչ թե սգալով, այլ տոնելով, քանզի այն հաղթանակած օր է:

Այսօր, կարևորելով «Փաստաբանի օրվա» խորհուրդը և նշված օր սահմանելու նպատակները, կարծում ենք, որ **հունիսի 2-ը** առավել քան նախընտրելի օր է:

Հարգանքով՝

- | | |
|-----------------------|-------------------------|
| 1. Գայանե Դեմիրջյան, | 11. Պարգև Սարոյան, |
| 2. Անի Համբարձումյան, | 12. Նաիրա Բարսեղյան, |
| 3. Եվգենիա Մուրադյան, | 13. Էդգար Եղիազարյան, |
| 4. Արթուր Ապիկյան, | 14. Հովհաննես Խուրդյան, |
| 5. Արտակ Շադյան, | 15. Լիլիթ Սարգսյան, |
| 6. Վահագն Դալլաքյան, | 16. Գագիկ Մելիքյան, |
| 7. Սայադ Բադալյան, | 17. Եղիշե Բազդյան, |
| 8. Աննա Ավետիսյան, | 18. Տիգրան Սիմոնյան, |
| 9. Անի Խլդաթյան, | 19. Ամալյա Մելքոնյան, |
| 10. Հասմիկ Զամալյան, | 20. Նշան Մաթևոսյան: |